

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ԱԶԴԻՍ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ՈՒՂՂԱԾ

ԱՐԱՄԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ.

Վեհափառ Կաթողիկոսը Վանից ստացել է մայիսի 31-ին Վանի հազարաւոր հայերի ինքնապաշտպանութեան պարագլուխ հայ հերոս Վանի նահանգապետ Արամից, 26 մայիսի 1915 թ. 350-րդ համարով, հետեւեալ գրութիւնը.

Վեհափառ Տէր,

Անշուշտ հաճոյքով և ցաւով լսեցիք ամբողջ Հայաստանի և մանաւանդ վասպուրականի վիճակի մասին: Կը հաւատամ, որ հաճոյքով, որովհետեւ հայերն ամեն բան ըրին իրենց ազգային պատուի փրկութեան համար, բայց և ցաւով, որովհետեւ հակառակ ամէնքի ցանկութեան, չյաջողեցանք շատ մը գաւառները փրկել թիւրք-քրդական խժոժութիւններէն: Գաւառներու մէկ մասը ենթարկուեցաւ կոտորածի, թալանի և համարեա ամբողջ գիւղերը հրկիզուեցան, բացի Շատախի մաս մը գիւղերէն, որոնք փրկուեցան մեր քաջերու հերոսական ինքնապաշտպանութեան շնորհիւ:

Այժմ գաւառներու և քաղաքի պատկերը այս է.—Ամբողջ գիւղերը աւրուած և հրկիզուած, ոչխար, եղ, տուն, երկրագործական գործիքներ թալանուած: Երկամսեայ դէպքերու շնորհիւ հոս հոն փակուած կամ լեռներու վրայ խոտով կերակրուելուն պատճառով սոսկալի հիւանդութիւններով բռնուած, (տիֆ և մանաւանդ տիզանթէրի)—երեխաներու սոսկալի և մեծաքանակ մահացում: Գիւղական աշխատանքներու վերսկսման, և գիւղերու վերաշինութեան անկարելիութիւն, որովհետեւ լեռներն ապաստանած քիւրդերը դեռ հանդիստ չեն տար հայ գիւղացիներուն իրենց գիւղերը տեղաւորուելու և վերաշինելու: Ռուսական զօրքի յաղթական մուտքէն վերջ բազմաթիւ յարձակումներ եղան, Արաղայ,

Արճակ, Արճէշ, Ալճաւազ, Մոկս և Շատախ: Եւ դեռ կը շարունակուին Մամրտանքի և Սպարկերտի շրջանի կռիւները:

Եթէ անմիջական դրամական օգնութիւն չհասնի Կովկասէն, այն ինչ որ չկըցաւ ընել թիւրքի եօթադանը, պիտի ընէ և մանաւանդ տարափոխիկ հիւանդութիւնը:

Կը խնդրեմ «Եղբայրական Օգնութեան Կոմիտէէն», որ անմիջական դրական օգնութիւն հասցնէ աւրուած գիւղերու տուներու վերաշինութեան և գիւղատնտեսական գործիքներու և կենդանիներու հայթայթման համար:

Արդէն իմ նախագահութեամբ կազմակերպուած են զաղթականներ տեղաւորող և նպաստ-օգնութիւն հասցնող կոմիտէներ: Տեղական միջոցներով գործի ենք սկսած, որն արդէն սպառելու վրայ է: Լաւ կը լինէր, որ գումարներ տրուէր այդ կոմիտէներու տրամադրութեան տակ, որ պիտի մանրամասն հաշիւ տայ Ձեզ, անշուշտ իմ հսկողութեան տակ:

Աւելորդ է ըսել, որ բժշկական օգնութեան գործը, բազմաթիւ բժիշկներով, դեղագործերով և մեծաքանակ դեղերով՝ անհրաժեշտ է, որ անմիջապէս ճամբայ ելլեն :

Կը յուսամ, որ ի նկատի առնելով այս բացառիկ վիճակը, կոչ կընէք բոլոր բարեգործական և կուլտուրական ընկերութիւններուն, որ անմիջական օգնութեան հասնեն Վասպուրականին:

Պիտի խնդրէի նոյնպէս, Վեհափառ Տէր, որ անմիջապէս թելադրէիք Այվատեան սրբազանին, որ փութար Աղթամարի կողոպտուած վանքը հասնելու դրամական օժանդակութիւններով, և վարէր Աղթամարի Կաթ. Տեղապահի պաշտօնը, որը թափուր կը մնայ այժմ *):

Համբուրիս ս. Աջիդ Արամ:

— 222 —

*) Դրութեան տակ կայ կնիք հետեւեալ մակադրութեամբ. «Ванское Окружное Управление, Վանի Շրջանի Վարչութիւն»: